


Գ Ր Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ՁԵՌԱԳՐԱՑ», հատոր Ա.
 (5-րդ դարից մինչև 1250 թ.), 48 նմանահանություններով, ՌՆ=1951: Տպա-
 րան Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս: (Մեծադիր, Երկսյուն,
 1256 էջ, հեղինակի լուսանկարով և Ս. Սիմոնյանի ընդարձակ առաջաբանով):

1898 թվին ուսանողական շրջանս ավար-
 տելով, Եվրոպայից էջմիածին եկա: Խրիմ-
 յան Հայրիկի կարգադրությամբ Գեորգյան
 ճեմարանում ուսուցիչ նշանակվեցի և վանքի
 բակում առանձին բնակարան ստացա: Այդ
 ժամանակ էր, որ առաջին անգամ ծանոթա-
 ցա Գարեգին վրդ-
 Հովսեփյանի հետ, որը
 միաբանների քննակա-
 րանների շարքում ա-
 ռանձին սենյակ ու-
 ներ: Նիհար, թուլա-
 կազմ և գրեթե միշտ
 հիվանդ մի Երիտա-
 սարդ էր նա: Ընմա-
 րանում դասավանդում
 էր հայագիտական ա-
 ռարկաներ: Նշանակ-
 վեց նաև էջմիածնի
 Զեռագրատան վարիչ:
 Թեև նիհար էր նա և
 հիվանդոտ մարդու
 տեսք ուներ, բայց աշ-
 խատանքի մեջ քաջա-
 ուղջներից ավելի ե-
 ռանդուն և շարժական
 գործունյա էր: Էջ-
 միածնի Զեռագրա-
 տունն այն ժամանակ
 ուներ միայն 4.000
 ձեռագիր: Միաբաններից և ճեմարանի դա-
 սակոսաններից նրանք, ովքեր ուզում էին աշ-
 խատել որևէ ձեռագրի վրա, գալիս էին
 Զեռագրատուն և Գարեգին վարդապետը
 միշտ պատրաստ և հոժարակամ տալիս էր
 նրանց հարկ եղած ձեռագրերը: Ինքը իր
 ամբողջ ժամանակը նվիրել էր մի կողմից
 խաչքարերի զարդանկարների ուսումնասի-
 րությանը, մյուս կողմից՝ ձեռագրերի մասն-



րանկարչությունների նկարագրության և եր-
 րորդ կողմից՝ ձեռագրերի հիշատակարան-
 ների հավաքմանն և ընդօրինակությանը:
 Այնքան էր տարված այս գործերով, որ
 նույնիսկ հասարակ խոսակցության մեջ
 սրանցից դուրս նյութ չուներ խոսելու: Բարձ-
 րագույն լսարանների ուսանողները իրենց սի-

րելի ուսուցչի անունը
 կատակով դրել էին
 «Խաչքար» և «Մանրա-
 նկարչություն»: Մո-
 ռացել էին ավելացնել
 «Հիշատակարան», որ
 իր ամենից ավելի սի-
 րելի առարկան դար-
 ձապ:

Անձնավան հիշա-
 տակներ իր մասին
 շատ ունեմ, բայց այդ
 մասին խոսել անհար-
 մար և ավելորդ եմ հա-
 մարում: Այնքան բարի
 էր քննադրությամբ, որ
 ո՛չ մեկի վրա բարկա-
 նալ կամ որևէ մեկի
 մասին շարսխոսել
 չգիտեր: Մի անհա-
 տական հանգամանք
 միայն թույլ եմ տալիս
 ինձ հիշել:

Զեռագրատունը, անշուշտ, իբրև պաշտո-
 նական հիմնարկ, ուներ բացման որոշ ժա-
 մեր: Ես ձեռնարկել էի մի շատ երկարատև և
 դժվարին աշխատության, այն է՝ թերթիկ ամ-
 բողջ այդ 4.000 ձեռագրերը և ցուցակագրել
 այն բոլոր էջերը, ուր որևիցե ոտանավոր
 գրություն կար: Բացի առանձին բանաստեղ-

ծական ժողովածուներից, հին գրիչները սովորություն են ունեցել մի որևէ ձեռագրի պարագա էջում, կամ նկարի հետևում մի որևէ ոտանավոր արտագրել: Իմ գործը եղավ նախ՝ ցուցակագրել այդ բոլոր ոտանավոր պարունակող էջերը և երկրորդ՝ արտագրել այդ ոտանավորները: Մեծ աշխատանք պահանջող մի գործ էր այդ. ես կարողացա կազմել տարիների ընթացքում 2 խոշոր հատոր, մինը Տաղարան, մյուսը Գանձարան անունով, որոնց մեջ հավաքեցի բոլոր արտագրած ոտանավորներս: Գարեգին վարդապետը տեսավ իմ գործը, հավանեց և իբրև գիտություն շերմեհանող երկրպագու, ո՛չ միայն քաջալերից իմ աշխատանքը, այլև իբրև միակ բացառություն, տվեց ինձ Ձեռագրատան բանալին, որպեսզի հիմնարկի բացման պաշտոնական ժամերից դուրս, օր ու գիշեր, ուղած ժամանակս, երթայի և աշխատեի: Ես վերջացրի իմ աշխատանքը: 4.000 ձեռագրերն ամբողջ թերթեցի և այդ միջոցին էր, որ այլ նյութերի մեջ գտա Եղնիկի միակ ձեռագիրը, որ Զմյուռնիայի մեծ հրդեհին այրված էր համարվում (№ 1111):

Թե որքա՛ն շնորհապարտ եմ ես Գարեգին վարդապետին, այդ միայն ես գիտեմ:

Հայ բանասիրության բոլոր ճյուղերում Գարեգին վարդապետը (ապա եպիսկոպոս, այժմ կաթողիկոս տարագիր տանն Կիլիկիո), իր որոնումների մեջ անխոնջ և անպարտաս, իր աշխատությունների մեջ ժրջան և փոթեհոսողն, իր սարկավազ ժամանակից արդեն, հրատարակել էր «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» (Թիֆլիս, 1893 թ.), որի նյութը զուտ ազգագրական է: Այնուհետև, իրար հետևից, հաջորդեցին հեղինակի մյուս աշխատությունները: Նրա կենսագրական աշխատություններից են՝ «Մխիթար Սասնեցի կամ Կերմանեցի» (տպ. Վաղարշապատ, 1899 թ.), Թումա Մեծոփեցու ընդարձակ կենսագրությունը (տպ. Արարատ, 1913 թ.): Հայ հնագրության համար նշանավոր է նրա շատ ընդարձակ հոդվածը, որ կազմում է «Շողակաթ» ժողովածվի երկրորդ կեսը և ուր ո՛չ միայն տալիս է հայ հնագրության, հայ գրի զարգացման տեսականը, այլև իր նկարած լուսանկարներով գործնա-

կանորեն ցույց է տալիս հինգերորդ դարից սկսած մինչև վերջին դարերը նրա զարգացման ընթացքը: Ընդարձակորեն ուսումնասիրել է Խաղբակեան տոհմի պատմությունը (3 հատոր), որ ո՛չ միայն այդ տոհմի պատմությունն է բազմաթիվ լուսանկարներով և արձանագրություններով լուսաբանված, այլև Հայաստանի նույն շրջանի (11—12-րդ դար) ընդհանուր պատմությունը:

Մի պարզ գրախոսականի մեջ անհնարին է հիշել մի առ մի այն բոլոր գործերը, որոնք պատկանում են իր գրչին: Բայց ամենից ավելի արժեքավոր է ներկա աշխատությունը, որ բաղկացած է 4 ընդարձակ հատորից, որոնցից առաջինն արդեն լույս է տեսել, իսկ մյուս երեք հատորները մամուլի տակ են և շուտով կհաջորդեն իրար: Թեև գրքի վերնագիրն է «Հիշատակարանք ձեռագրաց» (5-րդ դարից մինչև 18-րդ դար), բայց այդ վերնագիրը չի տալիս ամբողջ աշխատության իրական պատկերը, որովհետև ոչ թե զանազան ձեռագրերի պարզ հիշատակարաններն են ժամանակագրական կարգով դասավորված, այլ հայերեն բոլոր արժեքավոր ձեռագրերի հիշատակարանները՝ բազմաթիվ ծանոթություններով լուսաբանված: Այս նպատակին հասնելու համար, հեղինակը օգտվել է ո՛չ միայն մինչև այժմ սպառված բոլոր ձեռագրաց ցուցակներից (որոնց թիվը, իմ հաշվով, 60-ից ավելի է), այլև ինքը ման է եկել և տեսել անձամբ էջմիածնի, Նրուսաղեմի, Փոքր-Ասիայի, Պոլսի, Եվրոպայի զանազան քաղաքների և Ամերիկայի զանազան քաղաքների հայերեն ձեռագրերը: Նշանակալից է հատկապես այն, որ ամերիկյան զանազան քաղաքներում մասնավոր անձինք (հայ և օտար) սովորություն են դարձրել իրենց տնային գրադարաններում հայերեն ձեռագրեր հավաքել և հեղինակը այս բոլոր մասնավոր անձանց տները այցելելով, քննել է նույն ձեռագրերը և արտագրել նրանց հիշատակարանները: Դժբախտաբար, հեղինակը միջոց չի ունեցել այցելել և տեսնել Նոր-Ջուլայի ձեռագրերը (250 ձեռագիր), Եգիպտոսի (ուր թվում է թե կան ձեռագրեր), Վենետիկի, որոնց 3.000 ձեռագրից միայն 500-ն է մեզ ծանոթ՝ Լ. Բարսեղ Սարգսյանի երկհատոր ցուցակից,

նույնիսկ Վիեննայի Մխիթարյան վանքի 1.000 ձեռագրերը, որոնցից միայն կեսն է մեզ ծանոթ Հ. Տաշեանի ցուցակով:

Հայտնի չէ նույնիսկ, թե Երևանի Պետական մատենադարանի 10.000 ձեռագրերն էլ ամբողջապես ուսումնասիրել է: Չորս հատորների բովանդակությունը, մեր հաշվով, պիտի լինի 2.000 ձեռագիր, քանի որ այս առաջին հատորը ունի միայն 472 ձեռագիր:

Ուժ և կարողություն ենք մաղթում բազմավաստակ այլեզարդ հեղինակին, որպեսզի հաջողությամբ ի կատար ածի և ի գլուխ հանի իր մեծածավալ աշխատանքը, որ պատիվը պիտի կազմի ո՛չ միայն իր անձին, Անթիլիասի տարագիր Հայրապետանոցին, այլև ընդհանուր հայագիտության: Ուրախ ենք, որ իրեն աջակից, զորավիգ և օգնական է ընտրել Սիմոն Սիմոնյանին (սասունցի երիտասարդ), որի հմտությունը, աշխատանքի եռանդը և կորովը ինձ վաղուց հայտնի է:

Առաջաբանի վերջում հարգելի Ս. Սիմոնյանը գրում է, որ հայագիտությունը չորս աղբյուր ունի՝ հայ պատմագիրներ, օտար պատմագիրներ, հայերեն արձանագրություններ և ձեռագրաց հիշատակարաններ: Այս չորսից առաջինը և վերջինը մեծ չափով

հրատարակված են և հրատարակվում են: Օտար պատմագիրների այն հատվածները, որոնք վերաբերում են հայոց պատմության, սկսեցին հավաքվել և հրատարակվել մի քանի տարի առաջ մեր համալսարանի կողմից: Հրատարակվեց միայն 4 պրակ. Ստրաբոնը հայոց մասին, Ֆիրդուսին հայոց մասին, Տակիտոսը հայոց մասին, Իբն-ի Բատուտան հայոց մասին: Բայց մնում են դեռ շատ պատմիչներ, ինչպես Հերոդոտ, Քսենոֆոն, Պրոկոպիոս, բյուզանդական ու արաբական բազմաթիվ պատմիչներ: Պետք է թարգմանել մեր հարևան ժողովուրդների լեզուներով եղած աղբյուրները, որոնք արժեքավոր պատմական տեղեկություններ են պարունակում հատկապես 16—18-րդ դարերի թյուրք-պարսկական պատերազմների մասին:

Գալով արձանագրություններին, ուրախ եմ ասելու, որ ինքս կազմել եմ նրանց ամբողջական ժողովածուն՝ սկզբից սկսած մինչև 1500 թիվը, բոլորի գումարն է 2.050: Գործն ամբողջապես պատրաստ է և կտպագրվի առաջիկա տարիներում: Ժողովածուն կոչում եմ «Հայարձան» («Corpus inscriptionum armenicarum»):

Պրոֆ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

